

Բաբերդ. — Bayboürt.

Միւս ևս հոյակապ և հրաշակերտ մենաստան է Էօշ գեղջ 'ի սարատափ բլրի. և միւս այլ եկեղեցի զարմանաշէն յԷգրէկ գեղջ. յորս յամենեսին գոն արձանագիրքը վրացիք, զի առ հարստութեամբ նոցին շինեալք են: — Ասորդ գեօղ նշանակէ զգլխաւոր տեղի ԱԶՈՐԴԱՓՈՐ գաւառի Տայոց. յորոյ յՈՒքալ գաւառի էին վիճակեալքն այժմ Թորթումայ Գէղէկ և Վարդէնէն, առ որովք բանակեալ էր Զառմիհր զորավար Պարսից հետամուտ լինելով քաջին Վահանայ, յամին 483: — Նորաշէն գիւղ մերձ 'ի Թորթում, յորում 40 երդ հռովմէական Հայոց:

47. ԻՍՓԻՐ վիճակ լեռնային յարևմտից Կարնոյ ունի զսահմանս հնոյ գաւառին Սպերու, շրջապատեալ 'ի Ճորոխ գետոյ, որ և 'ի նմին բղխէ. անուանի են բովք արծաթոյ սորա, այլ այժմ խափանեալք: Գլխաւոր տեղի վիճակին է Իսֆիր աւան յաջմէ գետոյն, 50 տամբք, կիսաւեր բերդիւ 'ի գագաթան լերին, յորում և մենաստան և եկեղեցի Հայոց լքեալ: Սա Թուի Սմբատաւանն անուանի յիշեալ ՅԱ դարու, և նախկին բնակութիւն Բագրատունեաց: — Գեօղք իբրև 50 են վիճակին Սպերու. յորս նշանաւոր Սաֆոռ 'ի սահմանս Բերդադրակայ: — Պարխար առ Պաւբրմաքէնի պղնձահանիւք: — Օրնոփէս 'ի ստորոտս Գոհանամ լերին 'ի հարաւոյ Իսֆիրու, յորում անուանի ուխտ վանաց Ս. Յովհաննու կամ Ս. Կարապետ, և մերձ նմին արծաթահանքն Վանք-մաքէնի: — Քամբոր յարևելից հարաւոյ Իսֆիրայ, որ է անշուշտ հինն ԿԱՄԲԱԼԱ, ուր Մեծն Աղեքսանդր առաքեաց զՄեմնոն 'ի խնդիր բովուց ոսկւոյ:

48. ՊԱՅՊՈՒՐԴ որ է ԲԱԲԵՐԴ վիճակ խաղտեաց Հայոց, որոյ քաղաք համանուն գլխաւոր քաղաք էր Հայաքաղդեաց կամ Արմենոխալիբք կոչեցեալ աղգի, արտաքոյ հնգետասան աշխարհացն Հայոց Մեծաց. և կայ 'ի վերայ գետոյն Ճորոխի, 'ի բարձու 5040' ոտից. և սա 'ի հնումն Բագրատունեաց Թուի լեալ ոստան. ունի բերդ 'ի բարձու խանգարեալ 'ի Ռուսաց յամին 1828, և սանդխաւոր ջրոյ Ճանապարհք փորեալք 'ի նմա. նշանաւոր շէնք են կամուրջքն, պէպէնաքէնն, ուլուՃամի մզկիթն: Բնակիչք 6000 են քաղաքին, յորս 100 տուն Հայոց, և ջրոք եկեղեցիք նոցա. գլխաւոր ձեռագործ քաղաքին է գորգ աղնիւ: — Գեօղք բազում սփռեալ են զԲաբերդաւ 'ի դաշտակողմն և 'ի լերինս, յորս գլխաւորք են Վարդենան աւան առ Սամանոս ջրով 'ի հիւսիսոյ արևմտից քաղաքին, յորում մնացուածք երկոց փոքունց գեղեցիկ եկեղեցեաց և քաղաքորմոց, աւերեալք 'ի Լաղնց իբր 60 ամաք յառաջ: — Վանքէն որ և Վահանաքէն և Օյոքէն, յորում անուանի մենաստան Լուսաւորչի: — Մասոդ 'ի կողս Գօք-պաղ (5) լերանց բարձանց, 'ի վերայ Ճանապարհին Կարնոյ: — Բալխոռ աւան յարևմտակողմն Վարդուհանայ 'ի վերայ Ճանապարհին Կիւմիւշխանէի:

49. Ի հիւսիսոյ Սպերու, 'ի ձախմէ Ճորոխայ և յարևմտից Նորին կան վիճակքն ՀԱՄՇԷՆ և ԿԻՒՐՃԻՍՏԱՆ որ է ԲԵՐԴԱԳԵՐԱԿ, ընդ նմին և ԽՈՏՐՋՈՒՐ, յեռին սահմանք Հայոց ընդ արևմտեանն հիւսիս, և սահմանակիցք Պոնտոսի, լեռնավայրք բարձունք. Համշէն, յորում բարձրաբերձ լերինք են և բովք եր-